նոնենիք: Եւ կայր Հայոց եպիսկոպոս մի, հաբեղայ մի եւ էրէց մի, հարիւր տուն հայի եւ երկու եկեղեցի. մինն ի բերթն եւ մինն ի
130 գուրս: Եւ ունէր սա որպէս Մանիսան՝ բերթ անառիկ ի վերայ բարձր լերին. բայց հաւան գէշ էր եւ ջուրն՝ չար: Եւ կացաք անդ երեք ամիս:

Եւ անտի երկու օրն հասաք ի ԹԻՐԱՑ:
135 Եւ սա մեծ քաղաք էր, պէնտէր եւ չէն. զի ամէն օր բեռն կու կապվէր եւ քարվան կ'ելնէր. բայց հայ տասն տուն կար. եւ էրէց չկար: Կացաք անդ ութ օր. քաղաքացիքն յոյժ քաղցր էին եւ հիւրասէր, Հայք եւ Տա-
140 ճիկքն:

Անտի ելեալ օրուկէսն հասաք ի ԿՕՉԱԼ ՀԻՍԱՐՆ: Եւ ի ճանապարհին կէսն դիպաք մեծ եւ բարձր լերան մի. եւ ի գլուխ լերինն կայր աղբիւր մի քաղցրահամ, ցուրտ
145 եւ սառն, որ յամառն մարդ չի կարել երկու կում ըմպել ի պաղութենէն: Եւ իջեալ ի լեռնէն ի դաշտն, ուստի սկսաւ նեղել զմեզ հաւան, մինչ զի հիւանդացաք ամէնքս. զի սէհիլ էր երկիրն այն եւ մերձ հարաւակողմ
150 ջուրքն վնասարարք եւ պտուղքն սաՓի նարինճ, թուրինճ եւ լիմոն անթիւ եւ աժան, ճմեռ չի լինէր, այլ հանապազ ամառ, մինչ զի անասունք եւ չորքոտանիք ի տարին երկու անգամ ծնանէին. նոյնպէս ամենայն բոյք

148 հիւանտացաք: — 150 նարինճ: